

## Ականջիս Մէջ Գուցէ Բաներ Գտնէ՛ք

Զօն Բժիշկ Ալիսիա Մ Քոնսնէլին

Մուսայ Ապու Դոհա

Թարգմանութիւն՝ Նենսի Գրիգորեանի եւ Սօսի Միշոյեանի

i

Երբ ականջս բանաք, մեղմօրէն դպէ՛ք:  
մօրս ձայնը կը յամենայ ներսը տեղ մը:  
Իր ձայնը արձագանգ մըն է, որ կ'օգնէ վերագտնել հաւասարակշռութիւնս  
Երբ գլխապտոյր կը զգամ ուշադրութեանս պահուն:

Գուցէ հանդիպիք արաբերէն երգերու,  
անգլերէն ֆերբուսձներու, գորս կ'արտասանեմ ես ինձի,  
կամ երգի մը, գոր կ'երգեմ մեր բակի ծլւլացող թռչուններուն:

Երբ վերքս կարեք, մի՛ մոռնաք այս ամենը նորէն դնել ականջիս մէջ:  
Կրկին դասաւորեցէ՛ք, այնպէս, ինչպէս պիտ շարէի՛ք գիրքերը ձեր դարակին վրայ:

ii

Օղաջու թռչող սարքին բզզոցը,  
F-16ին քնդիւնը  
ռումբերու պայթիւնը տուններուն,  
դաշտերուն եւ մարմիններուն վրայ,  
հեռու թռչող հրթիռներու ճիչը—  
պզտիկ ականջիս խողովակը այս բոլորէն ազատեցէ՛ք:

Վերջիս վրայ ձեր ժպիտներուն բուրումը սրսկեցէ՛ք:  
Երակներուս մէջ ներարկեցէ՛ք կեանքի երգը, որ արթնցնէ զիս:  
Թմբուկին մեղմօրէն դպէ՛ք, որ միտքս գուցէ պարէ ձեզի հետ,  
Իմ բժիշկս, որ ու գիշեր: